ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Փետրվարի 1-ին, կիրակի.—*Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հակոբ Գ. Հակոբյանը։*

Ս. պատարագին ներկա է Վեհափառ Հայրապետը։

*
* *

Փետրվարի 6-ին, ուրբաթ.—*Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանեց տ. Օշին վրդ. Նիկոլյանը և իր ուխտը կատարելուց հետո, ամսի 12-ին, վերադարձավ Ժնև։*

*
* *

Փետրվարի 8-ին, կիրակի.—Բուն Բարեկենդան.

Մեծ պահքի առաջին կիրակին է։ Մայր տաճարում, փակ խորանի վրա, պատարագում է տ. Հովհաննես քհն. Մարուքյանը։

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը՝ «Այսուհետեւ ի բաց ընկեցարուք ի ձէնջ գիտաբեութիւն և զչարութիւն» բնաբանով։

Ս. պատարագի երգեցողությունը Մեծ պահոց շրջանում կատարելու է հոգևոր ճեմարանի երգչախումբը։

*
* *

Փետրվարի 11-ին, շաբաթի.—*Այսօր առավոտյան ժամը 8-ին, հավարտ ժամերգության, կատարվում է Արևագալի հանդիսավոր ժամերգություն՝ նախագահությամբ Ամենայն Հայոց Հայրապետի։ Ժամերգությանը ներկա են Մայր Աթոռի ողջ միաբանությունը, հոգևոր ճեմարանի ուսանողությունը, դասախոսական կազմը, մայրավանքի պաշտոնեությունն ու աշխատավորությունը։*

*
* *

Փետրվարի 13-ին, ուրբաթ.—*Այսօր, հավարտ երեկոյան խաղաղական ժամերգության, Մայր տաճարում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվում է հանդիսավոր հսկում, որին ներկա էին բազմաթիվ հավատացյալներ։*

*
* *

Փետրվարի 14-ին, շաբաթ.—Տեառնընդառաջ.

Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը։

Ս. պատարագի երգեցողությունը հաջողությամբ կատարեց հոգևոր ճեմարանի ուսանողությունը՝ ղեկավարությամբ Արարատ սրկ. Գալստյանի։

*
* *

Փետրվարի 15-ին, կիրակի.—Բ կիրակի Բառասնորդական պահոց (Արտաքսման).

Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց տ. Նարեկ վրդ. Շաքարյանը։

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է Մայր տաճարի փոխ-լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը՝ «Զի որ յայսմ ծառայէ Քրիստոսի հաճոյ է Աստուծոյ և ընտիր մարդկան» բնաբանով։

Ս. պատարագին ներկա է Վեհափառ Հայրապետը։

*
* *

Փետրվարի 22-ին, կիրակի.—Բ կիրակի Բառասնորդական պահոց (Անառակի).

Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց տ. Գեորգ վրդ. Սերայդարյանը։

«Հայր մեր»-ից առաջ քարոզեց տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը՝ «Զի այս որդի իմ մեռեալ էր եւ եկեաց. կորուսեալ էր եւ գտաւ» բնաբանով։

*
* *

Փետրվարի 25-ին, շաբաթի.—Շուրջ երկամսյա՝ դեպի Հնդկաստան կատարած հովվական այցելությունից հետո Մայր Աթոռ վերադարձավ Հնդկաստանի և Հեռավոր Արևելքի հայրապետական պատվիրակ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը։ Երևանի օդանավակայանում տ. Հայկազուն արքեպիսկոպոսին դիմավորեցին տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը և Եղիշե սրկ. Բաղրամյանը։

Հայկազուն սրբազանը Մայր տաճարում իր աղոթքն ու ուխտը կատարելուց հետո, առաջնորդվում է Վեհարան և ջերմորեն ընդունվում Վեհափառ Հայրապետի կողմից։